

## ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ

*(Ըստ Խաչիկ Դաշտենցի արծակի)*

**Սիրուն Բաղրամարյան**

*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*

*ԱրՊԴ*

Ավանդույթի ուժը այս ստեղծագործության մեջ գործում է պատմական և բանահյուսական նյութի, կյանքի ու իրականության, ժողովրդական լեզվի ու ասքապատումների բազմաճյուղ և բազմաձայն գեղարվեստական մտածողության շրջանակներում:

Դաշտենցը պատմում է մի շարք ժողովրդական սովորությունների ու հնուց եկած ավանդությունների մասին: Բայազը գաղթի դժվար ճամփաներով Հայրենիք է հասցնում իրենց ամուսնական բարձր: Այդ մասին Հովի. Թումանյանն ահա թե ինչ է գրում. «...Եվ ինչպես այսօր կախարդանքների ժամանակ գիր, շորի կտոր, մազ և այլ կախարդական գորություն ունեցող իրեր ու գրեր դնում են բարձի մեջ ու տակ, որ բարձի վրա քնողը կախարդվի»:

Դին մեծերն ու իշխաններն ունեին իշխանական բարձեր: Այդ բարձերը նրանց մեծության աստիճանն ու հարգն էին որոշում ու իրանց այս բարձր նշանակությամբ համարվում էին սրբարան, որոնք և պետք է ժամանակի օրինությամբ ու կախարդանքներով կրոնի տեսակետից ապահովված ու գորացած լինեին: Իշխանի բարձը գորշանալը նույն էր, թե գորշանալ նրանց գորությունը: Այս է, որ ասել են Գողթան երգիչներն առասպելաբանելով, իբրև թե սիրահարված Սաթենիկը տենչում էր ծեռք բերել Արգամի բարձերից արտախուր խավարտ ու տից խավարծի, այսինքն նրա սերը<sup>1</sup>: Ուրեմն՝ Բայազը, քաջ գիտակցելով բարձի մեծ նշանակությունը, որ այն պատվի, հզորության հավասարազոր, անսովոր առարկա է, մեծ դժվարություններով այն հասցնում է Հայաստան:

«1873 թ. Գ. Սրվանձտյանցը մի գրույց է գրի առել այն մասին, որ ժայռի մեջ, Սիերի դռան ետևում է բախտի անիվը: Սիերն անդադար հետևում է անիվի պտույտին: Երբ այն կանգ առնի՝ այդ օրը Սիերը դուրս կգա զնդանից ու կկործանի աշխարհը»<sup>2</sup>:

Հայ ժողովուրդը սպասում է իր բախտի անիվի պտույտին, որի սկիզբն արդեն դրվել է Արցախի գոյանարտի հաղթանակով...

<sup>1</sup> Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 31:

<sup>2</sup> «Սասունցի Դավիթ» (հայկական ժող.էպոս), Երևան, 1990, էջ 56:

«Խողեղան» վեպում նկարագրված շատ ավանդություններ կապված են Սասնա ծոերի անվան հետ. չէ՞ որ էպոսի հերոսների ծննդավայրը Սասունն է: Օրինակ՝ «Իրիցանքը», որ Սև լեռան նշանավոր վայրերից է, եղել է գառնարած Դավթի սիրած տեղերից մեկը: Ավանդությունը պատմում է, որ իբր մի անգամ, Դավիթը անտառում մրսելով, մի արևոտ տեղ է փնտրում տաքանալու համար: Հանդիպելով մի արևկող բացատի, բացականչում է. «Եստեղ տաք է, հորեղբայր, իրիցանք (վառվեցինք)»: Այդ օրվանից այդ վայրը կոչվել է Իրիցանք:

Ծովասարի անվան բացատրությունն այսպես է բացատրում վիպասանը. լեռան գագաթին մի թասածք լիճ կար, որի ջուրը վճիռ էր ու մաքուր: Դրա համար էլ կոչվում է Ծովասար:

Արդեն նշել ենք, որ ըստ ավանդության՝ Մուշ անունը կապված է Աստղիկ դիցուհու հետ, որ լողանակս մշուշով էր պատում գետն ու դաշտը, որ ծածկվի իրեն տեսնել ցանկացողներից: «Դայոց պատմություն» գրքում կարդում ենք Մշո դաշտի և նրա բնակիչների մասին Վրթանես Փափազյանի գովական խոսքը. «Պետք է տեսնել այս դաշտը, ուսումնասիրել այդ դրախտանման տարածության բնակիչների արգավանդ արդյունքը, ծծել սքանչելի օդը, խմել անուշահամ ջուրը, աչքի առաջ միշտ այստեղ բնակվող ժողովորդի առողջ, պարեւ հասակը, լայն թիկունքը, արևակեզ, սակայն հրատոչոր աչքերով գեր դեմքը, նրա տաժանելի կյանքը, նրա ցավերը լսել...»<sup>1</sup>:

Երկում հաճախ է պատահում, որ հերոսները սքանչանում են բնության իրաշագեղությանը: Առաջին անգամ խողեղանը տեսնում է, թե ինչպես են սպիտակ մշուշներ փաթաթվում ծառերի կատարներին և սահելով ցած՝ ցնդում: Քիշոն նրան բացատրում է, որ երկի էլի մարդ է գնացել լողացող Աստղիկին տեսնելու: Զարմացած հովվին քիշոն հանգիստ բացատրում է. «Երբ Աստղիկն իմանում է, որ անտառի ծմակներից իրեն մարդիկ են նայում, նա ջրի փրփուրները գունդ-գունդ շպրոտում է նրանց երեսին: Էդ փրփուրներն են, որ Սև սարի վրայով գլորվելով՝ հասնում են մինչև Բռնաշեն: Մի մասն էլ Սառնիկի սարով թափվում է Մշո դաշտ» (էջ 83)<sup>2</sup>:

Հինավուրց այս հավատալիքը ժողովորդի մեջ կենդանի էր երկար դարեր, և վերոհիշյալ «մշուշի» հետ է կապվում Մուշ, Մշո անվանումների բացատրությունը: Մուշ անվան այս բացատրությանը հանդիպել ենք նաև «Տիգրան Մեծ» դրամայում: Գրականագետ Լ. Սկրտչյանը հաստատում է Մուշ անվան այլ բացատրություն. արաբական աղբյուրներում պատմվում

<sup>1</sup> Փափազյան Վ., «Դայոց պատմություն», Երևան, 2000, էջ 95:

<sup>2</sup> Դաշտենց Խ., «Խողեղան», Երևան, 1960:

է, որ հայոց արքայադուստր Տարոնն ուներ շատ փեսացումներ, բայց սիրահարվում է Սանասարի որդուն՝ Մուշին: Տարոնի հորեղբոր որդին՝ Բակուրը, Մուշի կերպարանքով ներկայանում է Տարոնին և փախցնում, անցնում արաբների կողմը, ընդունում մահմեդականություն և ամուսնանալով Տարոնի հետ, նրան էլ ստիպում է վարվել նույն ձևով:

Թեպետ արաբների հովանավորության տակ Բակուրը լավ կյանք էր վարում, Տարոնը փախչում է նրանից, վերադառնում հոր մոտ և անցնում քրիստոնեական կյանքին: Որոշ ժամանակ անց Տարոնը ամուսնանում է իր սիրեցյալ Մուշի հետ: Այն վայրերը, ուր նրանք ապրում էին, սկսեցին կոչվել Տարոն, իսկ տեղի գլխավոր քաղաքը՝ Մուշ: Եվ, հավանաբար, այդ քաղաքի մոտ գտնվող դաշտն էլ նույնպես կոչվել է Մուշ:

«Խոդեդան» վեպում հիշատակվում է նաև հավատալիքների մասին: Օջախը, թռնիրը հնուց ի վեր պաշտամունքի օրինակ է եղել հայ ընտանիքներում: Յիշենք, թե ինչպես է այդի Ոսկեհատը, Խոդեդանի հարսանիքի ժամանակ, նորահարսի և նորափեսայի հետ պտտվում թռնրի շուրջը, որից հետո են միայն նստում հարսանեկան սեղանի շուրջ:

Սակայն որոշ հավատալիքներ թռնում են շինուած, անբնական տպավորություն: Դրանցից է այն, երբ առաջին երեխայի ծնունդից հետո Ոսկեհատը երեք անգամ հարցնում է.

- Ե՞ս եմ թեքն, թե՞ դու:

Բայազը երեք անգամ դրական է պատասխանում, և միայն դրանից հետո է պառավ գեղջկուիին նրան օրինում՝ «թեքնությունով անցնի»: Նման տպավորություն է թռնում նաև այն հավատալիքը, երբ մոր կրծքից արդեն ութ տարեկան երեխային կտրելու համար, եզդի Մստոն խորհուրդ է տալիս. «Քուրո՛ ջան, եդ երեխային պետք է լողացնել Արազի ջրով կան պետք է նրա հայրը Նեմրութի կողմից եկող մի դուշ բռնի, քերեցիկը հանի տա երեխային՝ ուտի, որ մոր կրծքից կտրվի» (էջ 599):

Նշեցինք որ, «Խոդեդան» վեպը անսպառ նյութ կարող է տալ ազգագրությանք զբաղվողներին. ազգային սովորություններ, ավանդություններ, հայկական էպոսի բազում դրվագների հիշատակություններ, ծեսեր, տոններ, անգամ՝ հագուստ, նիստ ու կաց:

Վեպում նկարագրված են նաև մասսայական տեսարաններ: Օրինակ՝ Թարգմանչաց վաճրում կազմակերպվող տոնախմբությունները, մրցությունները, Խոդեդանի հարսանիքը, Վարդավառի տոնը և այլն: «Խոդեդանը» որոշ իմաստով կարելի է կոչել նաև ազգագրական վեպ, որտեղ ընթերցողը կգտնի մի յուրահատուկ աշխարհ, մի ժողովուրդ՝ իր ինքնատիպ ազգային սովորություններով, ապրելակերպով, հասարակական կենցաղով, սասունցիներին բնորոշ հատկություններով:

Այն, ինչ կարծում է հայ անվանի վիպասան Դ. Ղեմիրճյանը վեպ գրողի նամակին, վերաբերում է նաև Դաշտենցին, որ փայլուն կերպով է իրականացրել իր գրական մտահղացումը: «Իմ կարծիքով՝ գրողը նախօրոք կազմած սխեմաներով չպետք է առաջնորդվի, նա պարտավոր է նախ խորապես ուսումնասիրել իրեն հետաքրքրող նյութի, թեմայի պատմական ժամանակաշրջանը, փաստերը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նշանավոր դեմքերը, կենցաղը, սովորույթները, այն ամենը, ինչ կապվում է տվյալ ժամանակաշրջանի հետ: Ապա՝ առաջնորդվելով ռեալիզմի սկզբունքներով, նա պետք է հրապարակ բերի այնպիսի գործ, որը նոր աստիճանի կրաքարացնի գրականությունը և նույնիսկ պատմությունը: Գրողը պատմություն չպետք է գրի, ինչպես կարծում են որոշ մարդիկ, այլ պետք է պատմության հոգին վեր հանի գեղարվեստական երկի ձևով»<sup>1</sup>:

Դաշտենցն իր «Խորեղան» վեպին տվել է էպոսային գույներ՝ այս մոտեցնելով ժողովրդի նոր կյանքի կառուցման ձգտումներին:

«Ունչպարների կանչը» վեպը մի անգամ ևս ցուցադրեց Դաշտենցի գեղարվեստական մտածողության իմքնատիպությունը: Նրա տաղանդի ուժը ամենից առաջ պետք է փնտրել ժողովրդի սրտում, նրա էքնիկական հոգեբանության և բնաշխարհի խոր իմացության մեջ, որոնք ուժեղ նստվածքներ են տալիս նրա կերպարների ներաշխարհում՝ պայմանավորելով նրանց բնականությունն ու ամբողջականությունը: Վիպասքն ընթերցելիս, թվում է, թե գործ ունենք աշխարհագրագետ գիտնականի հետ, ով ուսումնասիրել, դասդասել, անգիր է արել տվյալ տեղանքի քարտեզը, աշխարհագրական անունները, որպեսզի մանրամասն ներկայացնի իր ունկնդիրներին՝ բաց չթողնելով ոչ մի մանրութ, ոչ մի ձոր ու վանք, սար ու գյուղ, դաշտ ու բարձունք. «Ամեն սարի ու սարավանդի վրա մի բերդ կամ բերդամորոց կար: Մշո հովտի վրա շինված էր Մուշեղի բերդը: Մոկնաց հովտի մեջ երևում էր Մոկնաց բերդի ավերակները: Ալվարինջի մոտ՝ Պստիկ բերդը: Բերդակի դաշտահովտի մեջ՝ Խասայուղի վերևում՝ խոյանուն է առեղծվածային Սմբատաբերդը» (էջ 35)<sup>2</sup>:

Սասնա մարդիկ դիմացկուն ու կորովի, քաջ են ու դյուցազնական: Կարծես՝ այդպիսին են նաև ջրերը: Ավանդավեպը պատմում է, որ Սասնա գետին դիմանալու համար ամուր կամուրջ էր պետք շինել: Յայտնի վարպետ Բարձնանը մի քանի անգամ կառուցում է, բայց կամուրջը չի դիմանում Մարաթուկից ու Ծովասարից սկիզբ առնող գետի հսկա ուժին: Բարձնանին երազում երևում է մի ծերունի և խորհուրդ է տալիս, որ եթե

<sup>1</sup> ՀՀ ԳԱ «Գրական ստեղծագործության վերլուծության ուղիմերը և սկզբունքները», Երևան, 1983, էջ 323:

<sup>2</sup> Դաշտենց Խ, Ունչպարների կանչը, Երևան, 1984:

ուզում է, որ իր շինած կամուրջն ամուր լինի, առավոտյան առաջին հանդիպած շնչավորին դնի հիմքում և որմը նրա վրա շարի: Առավոտյան Բարձանին հանդիպում է սիրած կինը՝ Փրեշան՝ կերակուրը ձեռքին: Տիրում է Բարձանը: Կինը հարցնում է տիրության պատճառը, և վարպետը պատմում է տեսած երազը: Կինն ասում է. «Մահը մահ է, շինի՛ր քո կամուրջը»: Բարձանը կնոջը դնում է շինվածքի հիմքում և պատը շարում: Իսկ երբ կամուրջը պատրաստ էր, ինքն էլ է նետվում ջուրը: Այդ օրվանից կառույցը կոչվում է Փրե-Բարձանի կամուրջ՝ վարպետի և իր կնոջ անունով: Դայ ժողովրդական էպոսում նույնպես փոքր Միերը դեռ պատանի կամուրջներ էր շինում:

Բնության մեջ յուրաքանչյուր բերդ, ջրվեժ, կամուրջ, գյուղ ունի իր անունը, իսկ անուններն էլ՝ իրենց բացատրությունները. «Մի խոլ ու խոր շառաչ է գալիս Զանգակ սարի կողմից: Ես այդ ձայնը առել էի Քարձորի տակով անցնելիս: Որքան մոտեցա Կարմիր ծառին, այնքան այդ գոռոցը ուժեղացավ: Վերջում հիշեցի, որ դա Գուռզուռա կոչվող ջրվեժի գոռոցն է Արածանու վրա՝ Խոզմո սարի տակ, որի թնդյունը լսելի էր շատ հեռուներից, մանավանդ՝ պարզկա գիշերներին և վաղ առավոտյան: Արաբոն նրա մասին ասում էր. «Էդոր համար կըսեն Գուռզուռ, որովհետև ձեն կիտա ու իր ձեն երեք օրվա ճամկա կերթա» (էջ 39):

Ստեղծագործության պատանի հերոսը ինչ ճանապարհներով որ անցնում է՝ գրողը հանճարեղ իրազեկությամբ նկարագրում է ուղին. «Միայն մի տեղ կանգ առա. այդ Սողգոնն էր, հոչակված իր սոխով և անուշահամ շաղգամով: Այդ գյուղի մոտակայքում իմ հայրենի քաղաքի գետակը գալիս միանում էր Մեղրագետի ջրերին: Այդտեղ հասնելով՝ նա սպառում էր իր կյանքը՝ խառնվելով ավելի մեծին, դառնալով անճանչելի ու անըմբռնելի:

Իմ կյանքն էլ այդ գետակի նման էր:

Ես գնում էի դեպի Խլաթ՝ հեռանալով իմ ծննդավայրից և խառնվելով ավելի մեծին ու անծանոթին: Եվ, արդյոք, երբեկցե վերադարձ կլինե՞ր դեպի Մուշ» (էջ 41): Կամ՝ «Ճեկ Դավիթը Մանազկերտի լեռների միջով մեզ առաջնորդեց դեպի Զեռնակի լանջերը... Մոտենում ենք Կայենի ծառերին և Աբելի աղբյուրին... Գիշերով հասանք Խաչմելիք գյուղի տակ» (էջ 210):

Դաշտենցը ոչ միայն գիտե տեղանքը, այլև անունների ծագման վերաբերյալ ավանդությունները: «Լսել էի, որ այսուցիները զվարք ժողովուրդ են, ունեն ծկուն խելք և առատ գինի: Որ առաջյալներից մեկը առաջին անգամ այդտեղ հասնելով և այդ վայրի գինին խմելով՝ բացականչել է. «Այլ ո՞ւր երթանք, եղբայր, սրանից էլ լավ տե՞ղ», և այդ օր-

Վաճառից այդ գյուղի անունը մնացել է Այլուր, որից հետո աղավաղվելով՝ դարձել է Ալուր կամ Այլուր» (էջ 194):

Ազգային ավանդույթը, աշխարհագրական միջավայրի գգացողությունը, ժողովրդի կենսամտածողությունից եկող բնության պաշտամունքը մի ուրույն դրսնորում ունի «Ռանչպարների կանչը» վեպում: «Նեմրութ լեռան տիրակալը մի անբարտավան իշխան է եղել: Նա թրով հարձակվել է աստծո վրա, որ նրան հաղթի և իրեն հայտարարի աստված: Գոռող իշխանը Վաճա ծովի ավագները ուղտերին բարձած բերել է տալիս դեպի Նեմրութ, որ իր գահը բարձրացնի, երկինք հասցնի և թրի մի հարվածով վայր գլորի աստծուն ու նստի նրա տեղը: Երկնավորը, զայրացած, իշխանի ավագով բեռնված ուղտերի քարավանը քարացնում է դեպի Շամիրամ գյուղը շարժվելու ճանապարհին, իսկ Նեմրութին անիծելով՝ որոտմունքով ցցում է հիմքից, զագաթի քարաժայռերն ու փոշին շպրտելով ստորոտների վրա և տեղը գոյացնելով մի հսկայական փոս, որից մինչև այսօր դեղին գոլորշիներ են բարձրանում» (էջ 42): «Ռանչպարների կանչի» նյութը ավանդական է, ինչպես բնության ինքնակրկնվող տարերքը, բայց և նոր, ինչպես նոր բացվող օրը, ինչպես սպասված ամեն մի կատարյալ հերոսապատում:

## ТРАДИЦИИ, ОБЫЧАИ И ИСТОРИЧЕСКИЕ МЕСТА

Сирун Багдасарян

Резюме

В статье рассматриваются упоминания, которые нашли свое место в прозе Хачика Даштенца, который рассказывает о традициях, обычаях и исторических местах.

Будучи писателем исторического типа Даштенц своей прозой представился как эстет, который прекрасно описывает страну Сасун, его разговоры и его знаменитые имена. Подчеркивается, что национальные традиции, места, чувства и взгляды людей, защита природы по разному отражаются в работе Даштенца.

TRADITIONS , HABITS AND HISTORICAL PLACES. (ACCORDING TO KHACHIK DASHTENTS' PROSE)

Sirun Baghdasaryan

Summary

In article is observed and examined the mentions which had taken place in the prose of Khachik Dashtents which told about traditions, habits and historical places.

Being the author of historical-saying type Dashtents with his prose was presented as aesthete, who well know described country Sasun and about the talks of their popular names. It is underlined that national traditions, geographical places, sensation, the people views, the protection of nature were different manifested in the work of Khachik Dashtents.

## ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱԴԻ»-Ն ԵՎ

ՂԱՐԱԲԱԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾԱԿԱՏԱԳԻՐԸ

## XVIII ՂԱՐԱՎԵՐՁԻՆ ԵՎ XIX ՂԱՐԱՎԿՁԲԻՆ

(սկիզբը նախորդ (թիվ 1, 2010) համարում)

Զինահիմա Առաքելյան-Բալայան

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԱրՊԴ

Ռաֆֆին անհնարին է գտնում, որ Երեմիա Յասան Զալալյանը (Կաթողիկոս) շարունակած լինի XIII դարում ապրած Գրիգորիս եւ Եղիա վարդապետների (Կիրակոս Գանձակեցին նրանց հիշում է ոչ միայն որպես հավատի նվիրյալներ, այլև՝ գիտուններ) անավարտ պատմությունը<sup>1</sup>:

Իսկ ինչո՞ւ չէ: Գուցե, երբ Կիրակոս Գանձակեցին գրում էր յուր Երկասիրությունը, այդ ժամանակ տեղյակ չէր նրանց՝ պատմություն գրելու փաստին: Ասողիկը երբ շարադրում է «Պատմիթիւն տիեզերական» գիրքը, ընդգծում է յուր ապրած ժամանակաշրջանի երեւելի հայտնի մարդկանց, սակայն չի նշում Գրիգոր Նարեկացու անունը, որովհետեւ Նարեկացին գոյություն չի<sup>o</sup> ունեցել: Իհարկե, ունեցել է: Պարզապես դեռեւս հայտնի չէր նրա «Մատյան ողբերգություն»-ը, եւ Գր. Նարեկացին դեռեւս մեծ ճանաչում չուներ: Ուրեմն, Ասողիկին մերժենք եւ հավաստի աղբյո՞ւր չընդունենք...

Ռաֆֆին յուր ծանոթագրության մեջ, շարունակելով ընդհանրացումները Երեմիայի «ժամանակագրութիւն անցից» պատմության շուրջ, հետեւելով Բեկնազարյանի գրքի մասին ասված՝ «Ղարաբաղում կատարված քաղաքական եւ Եկեղեցական պատմություն է, որի մեջ կարգով դրված են եղել բոլոր մելիքների գործերը» բացատրությանը, ասում է. «Երեմիա կաթողիկոս Յասան-Զալալյանը ինչպե՞ս կարող էր գրել բոլոր մելիքների գործերը, քանի որ վախճանվեցավ 1700թ., իսկ մելիքները

<sup>1</sup>Տես Ռաֆֆի, Գաղտնիք Ղարաբաղի, Եժ.10 հատ., տասներորդ հ., Երեւան, Հայպետհրատ, 1959 (այսուհետեւ Ռաֆֆի), էջ 479: